

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ	7
I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	10
II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	12
1. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 Միջոցառումն իրականացման Պայմանագրով հաշվետվության ներկայացում	12
2. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացված գնումների վերաբերյալ	13
3. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքների վերաբերյալ	14
4. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աշխատակիցներին հաշվարկվող աշխատավարձի վերաբերյալ	16
5. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ	18
6. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքների վերաբերյալ	20
7. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված դրամաշնորհի վերաբերյալ	22
8. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակում «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (ապրիլետ՝ ՀԱԲԼԾԿ) կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ	27

9. Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ 31
10. Նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ 32
11. ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրին մասնակցության մերժում 33
- III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 36
12. Գյուղատնտեսության խթանման '1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության վերաբերյալ 36
13. Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից առաջին կիսամյակում կատարված ծախսերի վերաբերյալ 38
14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ 40
15. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակցի պարգևատրման վերաբերյալ 44
- IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 47
16. Գյուղատնտեսության խթանման '1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում իրականացվող մոնիթորինգ 47
17. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար կազմակերպված գնումների գործընթացում առկա հսկողության գործընթացի թերացումների վերաբերյալ 48

18. Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանն ուղված արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ.....50
19. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ52
20. ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգ53
21. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ.....56
- V. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ57
- VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ71

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 151-Ա որոշում:

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

**Հաշվեքննության
առարկան**

2020 թվականի վեց ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

**Հաշվեքննության
չափանիշները**

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում,
5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,
6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն:

**Հաշվեքննություն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը:

**Հաշվեքննության
կասեցում**

2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշում:

**Հաշվեքննության
վերսկսում**

2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշում:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում, զննում և դիտարկում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում¹**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Առուստամյանը:

¹ Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՖԿ** Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները:
- ԳՖԿ** Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը:
- ՀԱԲԼԾԿ** «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
- ԳԾԿ** «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

ԱՄՓՈՓԱԳԻՐ²

2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջին կիսամյակի բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ:

Սակայն հիմք ընդունելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված պայմանները և ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հաստատելու մասին» թիվ 1586-Ն որոշումը՝ Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ հաշվեքննությունը վերսկսվել է:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը հաշվեքննության օբյեկտի կողմից հիմնականում ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1022-11001 ՀՀ խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը պետական աջակցության ոլորտում առկա են խեղաթյուրումներ՝ կապված հաշվետվությունում ներկայացված փաստացի և դրամարկդային ծախսերի հետ, գնումների գործընթացին առնչվող անհամապատասխանություններ և հսկողության գործընթացների թերացումներ, ինչպես նաև աշխատավարձի վճարման հետ կապված անհամապատասխանություններ՝ ի համեմատություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի:

1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պարվաստման ոլորտում առկա են աշխատավարձի վճարման հետ կապված

² Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտումով: Չնայած դրան սույն ընթացիկ եզրակացությունում արտացոլված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքի մասով հաշվեքննության օբյեկտի դիրքորոշումը և դրա վերաբերյալ հաշվոքննողների արձագանքները:

անհամապատասխանություններ՝ ի համեմատություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի:

1116-11003 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների գծով առկա են անհամապատասխանություններ ԳԾԿ-ի (նմուշառում իրականացնող մարմին) ՀԱԲԼԾԿ-ի կողմից (լաբորատոր փորձաքննություն իրականացնող մարմին) ներկայացված փաստացի արդյունքային ցուցանիշների միջև :

1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում առկա են խեղաթյուրումներ և հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված աշխատավարձի հետ, անհամապատասխանություններ թափուր հաստիքների չհամալրման հետ: Արձանագրվել է նաև ներքին աուդիտի գործառույթի, ըստ էության, բացակայություն:

1187-12007 Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ոլորտում առկա են մասնակիցների մերժման հետ կապված անհամապատասխանություններ՝ ի համեմատություն ոլորտը կարգավորող կառավարության որոշմամբ հաստատված ծրագրի դրույթների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից ծրագրի իրականացման նկատմամբ մոնիթորինգի հետ կապված հսկողության գործընթացների թերացումներ:

Առաջին կիսամյակի հաշվեքննության շրջանակում նաև ուսումնասիրվել են այն անհամապատասխանությունները, խեղաթյուրումները և հսկողության գործընթացների թերացումները (այլ փաստեր), որոնք արձանագրվել էին առաջին երեք ամիսների հաշվեքննության շրջանակներում: Վերջիններիս վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են սույն հաշվետվության V «Հետհսկողական գործընթաց» մասում: Սակայն այն հարցերը, որոնց գծով չեն կատարվել հաշվեքննության օբյեկտի կողմից գործընթացներ, ի համեմատություն վերջիս կողմից նախանշված ժամանակացույցի, կամ այն հարցերը, որոնք ընդհանրապես մերժվել են հաշվեքննության օբյեկտի կողմից, ներառվել են սույն հաշվետվության համապատասխանաբար II «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ», III «Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ» և IV «Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր» մասերում՝ այդ հարցերը տարբերակելով «կրկնկվող կետ» վերնագրերով:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ

եզրակացության 1-11-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 12-15-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Կարեն Առուստամյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամի
ժամանակավոր պաշտոնակատար
— դեկտեմբերի 2020 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ³

2020 թվականի 1-ին կիսամյակ

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		34,814,952.00	19,460,455.10	7,582,558.25	6,861,340.60	7,427,876.44
1022*	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	4,849,949.10	2,300,020.90	1,964,581.90	1,923,553.99	1,912,606.65
1026	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	190,842.90	82,462.40	6,455.33	6,455.33	6,974.13
1058*	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,305,617.50	978,709.70	874,385.02	837,649.22	891,562.45
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	509,201.20	235,720.10	53,271.70	53,271.70	51,445.01
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	30,803.40	13,861.50	6,255.00	6,255.00	6,255.00

³ Աստղանիշով նշված ծրագրերի մասով կատարվել է 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննություն

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	4,225,163.50	1,901,123.50	244,425.76	216,278.65	231,974.43
1104	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	253,120.00	121,361.00	-	-	69,720.00
1116*	Անասնաբուժական ծառայություններ	2,616,199.40	1,578,015.40	547,076.69	547,076.69	665,797.81
1134	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,896,310.80	1,197,332.60	564,691.50	208,795.17	208,795.17
1165	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	1,083,020.00	409,209.00	-	-	334,830.78
1187*	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	3,701,781.40	1,464,879.80	372,277.50	372,277.50	345,546.06
1190	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	6,182,062.20	2,206,878.60	685,119.22	540,138.72	546,259.54
1224*	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	6,970,880.60	6,970,880.60	2,264,018.63	2,149,588.63	2,150,778.63
8992	Նախորդ տարիների դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	5,330.78

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 Միջոցառումն իրականացման Պայմանագրով հաշվետվության ներկայացում

Առկա է անհամապատասխանություն թիվ 49-20 պայմանագրի 2.1.2 կետով սահմանված պահանջի մասով, համաձայն որի կազմակերպությունը պարտավորվում է հաշվետվությունը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թ. մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ծև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային)

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1022 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 100,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 82,174.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 71,275.96 հազ. դրամ:

Հիմք ընդունելով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշումը, «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» ծրագիրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2020 և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (Այս գլխում այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2020 թվականի փետրվարի 25-ին կնքվել է թիվ 49-20 պայմանագիրը (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետը սահմանում է՝ պետական մարմինը պարտավորվում է «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» 2020թ. ծրագրի (Այս գլխում այսուհետ՝ 1022-11001 Ծրագիր) իրականացման նպատակով Հիմնադրամին հատկացնել որոշմամբ նախատեսված

մինչև 300,000.00 հազ. դրամ գումար 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Պայմանագրի 2.1.2 կետով սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թ. մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային) հաշվետվության տեքստային մասի ներկայացում, սակայն ներկայացված հաշվետվությունում տեքստային մասը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հիմնադրամի կիսամյակային տեքստային հաշվետվությունը ներկայացվել է հոգաբարձուների խորհրդին: Սահմանված կարգով հաշվետվությունը կներկայացվի նաև նախարարությանը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը: Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում կիրականացվի հետհսկողական գործընթաց:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված դրույթների և Հիմնադրամի կողմից կատարված պարտականությունների միջև:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:

2. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացված գնումների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այս գլխում այսուհետ՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի հետ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այս գլխում

այսուհետ՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «...հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:», սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում Հիմնադրամի կարիքների համար մեկ անձ գնման ընթացակարգով կնքված ութը պայմանագրերի ընթացակարգերը ամբողջությամբ չեն իրականացվել Կարգի պահանջների հետ: Մասնավորապես՝ պայմանագրերի կնքելու և կնքված պայմանագրերի հայտարարությունները չեն հրապարակվել ռուսերեն լեզվով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ուսումնասիրելով տվյալ նկատառումը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված դրույթները, հարկ ենք համարում նշել, որ դիտարկումն ընդունվել է ի գիտություն և ենթակա է վերանայման:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը: Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում կիրականացվի հետհսկողական գործընթաց:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն Հիմնադրամի կողմից կազմակերպված գնումների գործընթացի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի դրույթների հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից կազմակերպվող գնումների գործընթացին:

3. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 108 կետի հետ:

1022-11001 Ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների կատարման համար «Ն.Շ.» ԱԶ-ի հետ կնքվել է թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագիր: Նշված պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությամբ սահմանվել է՝ «...մասնավորապես 2020թ-ի մարտ ամսվա առաջին կեսին 10-15օրյա ժամկետում կատարողը պետք է իրականացնի տնկարկների ամբողջ տարածքում առկա երկաթբետոնե հենասյուների (մոտ 3000 միավոր) վերատնկման, նորոգման, լրացման և լարերի ձգման աշխատանքներ, նաև իրականացնի 2,36 հա մակերեսով տնկարկում առկա հենասյուների հանում, փոսերի խորացում (ձեռքով) մինչև 50-60սմ, սյուների վերատնկում և ամրապնդում...»: Սակայն պայմանագիրը կնքվել է մարտ ամսվա երկրորդ կեսին՝ մարտի 23-ին: Համաձայն ապրիլի 2-ին գրանցված «Ն.Շ.» ԱԶ-ի հետ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության տեխնիկական բնութագրի՝ «...ձեռքբերված նոր հենասյուները բեռնաթափվել են և տեղափոխվել տնկարկի համապատասխան շարքերի մեջ: Հաջորդել են հենասյուների վերատնկման և դրանց ամրապնդման աշխատանքները բանվորական ուժով: Փոխարինվել են վնասված, կոտրված հենասյուները, ինչպես նաև շարքերի գլխային հենասյուները կրկնապատկվել են: Ընդհանուր առմամբ փոխարինվել և լրացվել են շուրջ 400 միավոր հենասյուն»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2020թ. ապրիլի 10-ին Հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման /հենասյուների/ թիվ ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/1 ծածկագրով պայմանագիր է կնքվել «Ս.Մ.» ԱԶ-ի հետ, իսկ ըստ Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության՝ հենասյուների մատակարարումը տեղի է ունեցել 2020թ. ապրիլի 20-ին: Նաև 2020 թ. ապրիլի 20-ին Հանձնման-ընդունման թիվ 1 ակտով արձանագրվել է «Ս.Մ.» ԱԶ-ի կողմից մատակարարված հենասյուների հանձնումը «Ն.Շ.» ԱԶ-ին:

Համաձայն ապրիլի 2-ին գրանցված «Ն.Շ.» ԱԶ-ի հետ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության՝ կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,505.0 հազ. դրամ: Հետևաբար 2020 թ. ապրիլի 2-ին կազմված «Ն.Շ.» ԱԶ-ի հետ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունում առկա է անհամապատասխանություն, քանի որ հենասյուները փաստացի ավելի ուշ են մատակարարվել «Ս.Մ.» ԱԶ-ի կողմից, քան տրամադրվել են «Ն.Շ.» ԱԶ-ին վերջինիս:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀԽԳՀ – ԳՀԱՇՁԲ – 20/2 պայմանագրի շրջանակներում կատարողը հենասյուների տեղադրումն իրականացրել է 2 խմբաքանակով՝ նախորդ

տարիներից այգում առկա և նոր ձեռքբերված հենասյուներով: Կատարողի կողմից ներկայացված արձանագրության մեջ նշված ձևակերպումը վերաբերում է նախորդ տարիներից այգում առկա հենասյուներին, որոնք տեղադրելուց հետո պարզ է դարձել, որ անհրաժեշտ է նոր խմբաքանակ, որն էլ ձեռք է բերվել ՀԽԳՀ – ՄԱԱՊՁԲ – 20/1 ծածկագրով կնքված պայմանագրի համաձայն: Ընդունում ենք ի գիտություն, որ ՀԽԳՀ – ԳՀԱՇՁԲ – 20/2 պայմանագրի ապրիլի 2-ի կազմված արձանագրության մեջ կատարողի կողմից նշված ձևակերպումը առկա է անհամապատասխանություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հարցը կուսումնասիրվի Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 108 կետի հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից կազմակերպվող գնումների գործընթացին:

4. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աշխատակիցներին հաշվարկվող աշխատավարձի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020թ. Հիմնադրամի հաստիքացուցակը ձևավորվել է 2020թ. փետրվարի 26-ին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ միաձայն: Մինչ այդ աշխատակիցները աշխատել են նախկինում ձևավորված հաստիքացուցակի համաձայն, սակայն չեն վճարվել: Հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Սակայն Հիմնադրամի աշխատակիցները 2020թ.-ի հունվար-մարտ ամիսների աշխատավարձը ստացել են 2020թ. ապրիլ

ամսին: Նշվածը Հիմնադրամի կողմից պատճառաբանվել է ֆինանսավորման ուշ ստացմամբ: Սակայն, հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը Նախարարությանը ծախսերի կատարման հայտ է ներկայացրել 2020թ. փետրվարի 26-ին, իսկ ֆինանսավորվել է 2020թ. մարտի 3-ին:

Ի լրումն՝ Հիմնադրամը նաև ուշ է վճարել աշխատակիցների աշխատավարձից պահված եկամտային հարկից գոյացած իր պարտավորությունը, ինչի արդյունքում հաշվարկվել տույժ է 221.98 հազ.դրամի չափով:

Հիմնադրամի կողմից ներկայացված բանկային քաղվածքի համաձայն՝ ընթացիկ հաշիվների մնացորդը 31.12.2019թ. դրությամբ կազմում են՝ 17,300.48 հազ. դրամ և 27,914.13 Եվրո, ընդ որում Հիմնադրամի հունվար ամսվա աշխատավարձի փաստացի ծախսը կազմել է 4,287.77 հազ.դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2020թ. մարտի 23-ի N 381 – Ա որոշմամբ, որից հետո 2020թ. մարտի 26-ին հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշմամբ հաստատվել է հիմնադրամի 2020թ. բյուջեն, այդ թվում՝ հաստիքացուցակը և տարեկան աշխատավարձի ֆոնդը, ինչից հետո վճարվել է հունվար – մարտ ամիսների աշխատավարձը: Օրենսդրության համաձայն՝ հիմնադրամը նաև վճարել է հարկային պարտավորությունները: Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձը վճարվում է պետական բյուջեի միջոցներից և ենթակա չէ այլ աղբյուրներից ֆինանսավորման: Հարկ ենք համարում նշել, որ աշխատավարձի վճարումն իրականացվում է միայն հոգաբարձուների խորհրդի տարեկան աշխատավարձի ֆոնդի հաստատումից հետո, իսկ վճարման ուշացումը պայմանավորված է խորհրդի անհատական կազմի հաստատման աշխատանքների երկարաձգմամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի համապատասխանեցմանը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթներին:

5. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության, 56-րդ կետի 6-րդ ենթակետի, 32-րդ կետի 5-րդ ենթակետի, 114 կետի 2-րդ ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին դրույթների հետ:

Կրկնվող կետ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակներում, 2020 թվականի մարտի 17-ից 19-ն ընկած ժամանակահատվածում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում նախատեսված է եղել Հիմնադրամի մասնակցությունը Prowein 2020 գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսին: Սակայն COVID-19 համավարակի պատճառով այն չեղարկվել և տեղափոխվել է 2021 թվականի մարտի 21-ից 23-ը:

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 49-20 Պայմանագրի Հավելված 2-ով ներկայացված Նախահաշվով նախատեսված է 40,500.0 հազ. դրամ՝ ցուցահանդեսի ընդհանուր ծախսերի համար, սակայն առաջին եռամսյակում ծախսերի կատարման հայտում նախատեսված գումարը կազմում է 26,800.0 հազ. դրամ: Փաստացի ծախսվել է 16,386.0 հազ. դրամ՝ տաղավարի նախագծի, կառուցապատման, կահավորման նպատակով:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ P7\04-02\20 պայմանագիրը «РестАрт» ՍՊԸ-ի հետ՝ Prowein Dusseldorf գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար: Ընկերությունը գրանցված է որպես իրավաբանական անձ Ռուսաստանի Դաշնությունում:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Գնումների օրենսդրության հետևյալ կետերի հետ.

1. «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման եւ դրա առավելագույն չափը, որը Հիմնադրամի կողմից չի կատարվել:

2. Հիմնադրամի կողմից Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման, որը չի համապատասխանում Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջին:

3. Հիմնադրամը պայմանագրով սահմանել է 50% կանխավճար, որը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջին, համաձայն որի՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը:

4. Հիմնադրամը կնքել է պայմանագիր, որը չի համապատասխանում Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

5. Կարգի 114 կետի 2-րդ ենթակետով սահմանում է պայման առ այն, որ կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, պայմանագրի կողմին վճարումներ չեն կատարվում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Prowein ցուցահանդեսի տաղավարի կառուցապատման համար կնքված պայմանագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 2 փուլով, յուրաքանչյուրը 15,650 եվրո գումարի չափով: Վճարվել է 50 տոկոս կանխավճար տաղավարի նախագծման, ինչպես նաև կառուցապատման անհրաժեշտ նյութերը ձեռքբերելու նպատակով, իսկ տաղավարի կառուցապատումն ավարտելուց հետո վճարվել է պայմանագրի գնի մնացած մասը, որից հետո պաշտոնական գրությամբ հիմնադրամը տեղեկացվել է 2020թ. ցուցահանդեսի չեղարկման և այն 2021թ. մարտի 21-23-ը տեղափոխման մասին: Չեղարկումից հետո կառուցապատողն ապամոնտաժել է տաղավարը և պահեստավորել հաջորդ տարվա ցուցահանդեսի համար: Հիմնադրամը չի կարող պահանջել գումարի վերադարձ, քանի որ կառուցապատողն իրականացրել է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հարկ ենք համարում նշել, որ ըստ ցուցահանդեսի

կանոնակարգի՝ տաղավարների կառուցապատման համար սահմանվում է կոնկրետ ժամկետ, մասնավորապես, COVID-19 համավարակով պայմանավորված, 2020թ. ցուցահանդեսի համար նախատեսված է եղել բոլոր տաղավարների կառուցապատումն իրականացնել մինչև 2020թ. մարտի առաջին տասնօրյակը:⁴

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը հետհսկողական գործընթացների շրջանակում չի վերաբերվում արձանագրված անհամապատասխանությանը:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության, 56-րդ կետի 6-րդ ենթակետի, 32-րդ կետի 5-րդ ենթակետի, 114 կետի 2-րդ ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին դրույթների հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից միջազգային ցուցահանդեսներին մասնակցության համար աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելուն:

6. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ:

Կրկնվող կետ

Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրի իրականացման 1022-11001 (այսուհետ՝

⁴ Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տրամադրվել է Բյուջեի կատարման հաշվետվության երեք ամիսների հաշվեքննության շրջանակում:

1022-11001 Ծրագիր) շրջանակներում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կարիքների համար հողային աշխատանքների պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությամբ սահմանվել է՝ «...մասնավորապես 2020 թվականի մարտ ամսվա առաջին կեսին 10-15 օրյա ժամկետում կատարողը պետք է իրականացնի տնկարկների ամբողջ տարածքում առկա երկաթբետոնե հենասյուների (մոտ 3000 միավոր) վերատնկման, նորոգման, լրացման և լարերի ձգման աշխատանքներ, նաև իրականացնի 2,36 հա մակերեսով տնկարկում առկա հենասյուների հանում, փոսերի խորացում (ձեռքով) մինչև 50-60 սմ, սյուների վերատնկում և ամրապնդում...»: Սակայն պայմանագիրը կնքվել է մարտ ամսվա երկրորդ կեսին՝ մարտի 23-ին: Համաձայն մարտ ամսվա աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության՝ փոսերի խորացման աշխատանքները կատարվել են ոչ թե ձեռքով, այլ տեխնիկայով՝ հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով: Ըստ այդմ՝ արձանագրվել է անհամապատասխանություն թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջների և աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության դրույթների միջև:

Համաձայն մարտ ամսվա 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածի (6 աշխատանքային օր) աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության՝ կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,505.0 հազ. դրամ: Կատարողի կողմից 2020 թվականի մարտի 31-ին Հիմնադրամին ներկայացվել է մարտ ամսվա համար նույն գումարի չափով վճարման հաշիվ վավերագիր «հենասյուների վերատնկում, փոխարինում, ամրապնդում, փոսերի խորացում» անվանումով կատարված աշխատանքների համար, որի գինը Հիմնադրամի կողմից հաշվեքննողներին ներկայացված ըստ ամիսների կատարված գնահաշվարկի հետ հնարավոր չէ համադրել, քանի որ աշխատանքների բացվածքը միանման չէ: Նշվածը առաջացնում է հսկողության գործընթացների թերացում, քանի որ անհասկանալի է, թե ինչպես է Հիմնադրամի կողմից կատարվել աշխատանքների ընդունում, եթե աշխատանքների բացվածքը ենթարկվել է փոփոխության:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների համար կազմված տեխնիկական բնութագրերում նշված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետները իրականացվել են շեղումներով՝ «Ն.Շ.» ԱԶ-ի հետ պայմանագիրը կնքվել է 23.03.2020 թվականին, իսկ տեխնիկական բնութագրում աշխատանքների սկսման ժամկետ է սահմանվել «մարտ ամսվա առաջին կեսի 10-15 օրը», ինչպես

նաև փոսերի խորացման աշխատանքները ձեռքով անելու փոխարեն տրակտորով անելու վերաբերյալ Հիմնադրամի հետ ԱԶ-ի համաձայնեցման փաստաթուղթ չի տրամադրվել: Հիմք ընդունելով 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը՝ անհրաժեշտ է տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու միջոցով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

«Նորիկ Շմավոնյան» ԱԶ-ի հետ 23.03.2020թ. կնքված N ՀԽԳՀ – ԳՀԱՇՁԲ – 20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանված է եղել փոսերի խորացում /ձեռքով/, որի ընթացքում հողի կարծր շերտի ի հայտ գալու հետևանքով դժվարություններ է առաջացրել ապահովել 50-60սմ: Անհրաժեշտություն է առաջացել փոսերի խորացման աշխատանքները կատարել հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով, ինչը նախօրոք համաձայնեցվել է հիմնադրամի հետ: Հարկ է նշել, որ հորատ կցորդիչի միջոցով փոսերի խորացումը կատարվել է կրկնակի անգամ, հողաշերտի համատարած կարծր լինելու պատճառով, և ըստ այդմ՝ Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը հետհսկողական գործընթացների շրջանակում չի վերաբերվում արձանագրված անհամապատասխանությանը՝ կապված առանց տեխնիկական բնութագիրը փոխելու ծառայության փաստացի շրջանակների փոփոխության հետ:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ:

**7. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001
միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական
ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված
դրամաշնորհի վերաբերյալ**

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 892,800.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 425,065.50 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 503,929.70 հազ. դրամ:

Նշված միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով՝ Նախարարության և ԳԾԿ-ի միջև 06.04.2020թ-ին կնքվել է պայմանագիր, պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է մինչև 1,121,273.10 հազ. դրամ: Ծրագրով նշված գումարի շրջանակներում 2020 թվականի ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 11 հիվանդությունների նկատմամբ իրականացնել 8,322,498 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ: Նշված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում ԳԾԿ-ի 38 համաճարակաբանների և մոտ 515 անասնբույժ մասնագետների միջոցով: Ծրագրի ծախսերի նախահաշվով վերը նշված գումարը նախատեսվել է համաճարակաբանների և անասնաբույժների աշխատավարձերի վճարման համար:

Այսպիսով, ԳԾԿ-ի հետ պայմանագիրը կնքվել է 2020 թվականի ապրիլի 6-ին: Համաճարակաբանների և անասնաբույժ մասնագետների հետ աշխատանքային պայմանագրեր կնքվել են 2020 թվականի ապրիլ ամսից սկսած: Սակայն համաձայն հավելված 4-ի՝ Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցի առաջին եռամսյակի ընթացքում նախատեսվել է կատարել 706,254 ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում 120,950 բրուցելոզի և 20,522 հատ լեյկոզի ախտորոշիչ միջոցառումներ: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի համաձայն՝ առաջին եռամսյակում կատարվել է 92,659 լաբորատոր փորձաքննություն, որից բրուցելոզի ախտորոշում 91,539 հատ և լեյկոզի ախտորոշում՝ 63 հատ: Ընդ որում, ըստ ներկայացված հաշվետվության նմուշառումները վերցրվել են ՀՀ 38 տարածաշրջաններից: Ստացվում է, որ համաճարակաբանները և անասնաբույժ մասնագետները առանց աշխատանքային պայմանագրեր կնքելու առաջին եռամսյակի ընթացքում իրականացրել են վերը

նշված աշխատանքները, որը ներառվել է ԳԾԿ-ի երկրորդ եռամսյակի հաշվետվության մեջ:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»: Այն դեպքում, երբ գործատուն խախտում է նշված նորմատիվ դրույթը, առկա է անհամապատասխանություն ՀՀ հարկային օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով, այն է. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում և ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում՝ Կառավարության սահմանած կարգով, իսկ ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից) գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար 250.000 դրամի չափով»:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2020թ.-30.06.2020թ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների կենդանիների հիվանդությունների ախտորոշման և կանխարգելման աշխատանքների իրականացման մասով հաշվետու ժամանակահատվածի պլանային /6շտված/ և փաստացի ցուցանիշների տարբերությունը ախտորոշման մասով կազմել է 34,676 միջոցառում /պակաս կատարված/ և կանխարգելիչ միջոցառումների մասով՝ 779,984 միջոցառում /պակաս է կատարվել 970,645 միջոցառում, ավելի է կատարվել 190,661 միջոցառում/: Կանխարգելիչ միջոցառումների մասով պակաս կատարումը հիմնականում պայմանավորված է պատվաստանյութերի գնման ժամկետների ուշացման հետ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության ամփոփ տվյալները՝

Ծառայությունների մատուցում /հատ/	Նախատեսված	Փաստացի	Տարբերություն
Բրուցելոզ,	480,360	478,449	1,911
Լեյկոզ,	5,000	3505	1,495
տուբերկուլինիզացիա	20,522	0	20,522
Իսլնախտ	10,748	0	10,748
Ընդամենը ախտորոշիչ միջոցառումների քանակը /հատ/, այդ թվում	509,106	481,954	34,676
Դաբաղ	905,440	613,820	291,620
սիբիրախտ	763,632	641,825	121,807
Էմկար	515,063	585,882	(70,819)
Հանգուցավոր մաշկաբորբ	176,131	295,973	(119,842)
Պաստերելյոզ	-	-	-
Ոչխարների բրադզոտ	-	-	-
Իոզերի դասական ժանդախտ	386,294	257,086	129,208
Թռչունների Նյուքասլ	980,100	552,090	428,010
Ընդամենը կանխերգելիչ միջոցառումների քանակը	3,726,660	2,946,676	779,984

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Տեղեկացնում եմ, որ «Անասնաբուժական ծառայությունների մատուցում» ծրագրի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակներում «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 2020 թվականի ապրիլի 6-ին կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության

գումարների մասին» թիվ 80/20 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1 121 273.1 հազար դրամ արժեքով, ներառյալ ԱԱՀ-ն:

Նշված գումարի շրջանակում նախատեսվել է 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 8 322 498 անասնաբուժական հակահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ: Վերջինիս իրականացման համար Կազմակերպությունը սկսած 2020 թվականի ապրիլ ամսից համապատասխանաբար՝ աշխատանքային և ծառայությունների մատուցման քաղիրավական պայմանագրերով, աշխատանքային հարաբերություններ է հաստատել թվով 38 համաճարակաբանի և 515 անասնաբույժի հետ:

Միջոցառման պլան-ժամանակացույցով նախատեսված էր 2020 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը թվով 43 290 կենդանիների խիստ վտանգավոր, վարակիչ հիվանդությունների նկատմամբ իրականացնել ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում պլանային (ճշտված) և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմել է 814 660 միավոր: Միջոցառումների թերի կատարումը պայմանավորված է 2020 թվականի առաջին եռամսյակում Կազմակերպության ամբողջությամբ կազմավորված չլինելու հանգամանքով, անհրաժեշտ պատվաստանյութերի ուշ մատակարարմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ս.թ. մարտի 16-ից նոր կորոնավիրուսային համավարակի պատճառով արտակարգ դրության շրջանակներում կիրառվող իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ հաշվեքննության արձանագրության մեջ նշված փաստարկումը, որ 2020 թվականի 1-ին եռամսյակում Կազմակերպության անասնաբույժների կողմից գյուղատնտեսական կենդանիների խիստ վտանգավոր, վարակիչ լեյկոզ և բրուցելոզ հիվանդությունների ախտորոշման նպատակով՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների թվով 91 539 հատ բրուցելոզի և 63 հատ լեյկոզի արյան նմուշներ ներկայացվել են «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին լաբորատոր փորձաքննության, որը ներառվել է երկրորդ եռամսյակի կատարողականի ցուցանիշներում, համապատասխանում է իրականությանը:

Վերջինս պայմանավորված է նշված հիվանդությունների կանխորոշման ռազմավարական անհրաժեշտությամբ, ինչպես նաև 2020 թվականի մարտի 19-ից Կազմակերպության բնականոն գործունեությունը սկսելու հանգամանքով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը: Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում կիրականացվի հետհսկողական գործընթաց:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ԳԾԿ-ի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների միջև:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի համապատասխանեցմանը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթներին:

8. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակում «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (ասյուիետ՝ ՀԱԲԼԾԿ) կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ

Առկա են անհամապատասխանություն ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի փաստացի արդյունքային ցուցանիշների միջև, ինչպես նաև Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի նշված պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ կապված, որը առաջացնում է անհամապատասխանություն նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի հետ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել

145,735.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 117,505.50 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 157,362.40 հազ. դրամ:

«Անասնաբուժական ծառայություններ» թիվ 1116 Ծրագրի «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութերի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» թիվ 11003 միջոցառման իրականացման նպատակով 2020 թվականի փետրվարի 10-ին Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագիր: Պայմանագրով՝ ինչպես որ նախատեսվել է ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ՝ ֆինանսական աջակցության չափը պետք է կազմի մինչև 338,919.40 հազ. դրամ:

09.07.2020 թվականին կնքվել է համաձայնագիր, որի առարկան եղել է պայմանագրին կից հավելված 2-ում կատարված փոփոխությունը: Հավելված 2-ում՝ Ծրագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն, առաջին եռամսյակի համար ֆինանսավորումը թողնելով նույնը, իսկ երկրորդ եռամսյակից սկսած՝ ֆինանսավորումը ներկայացվել է եռամսյակային աճողական տեսքով: Պետք է նշել, որ երկրորդ եռամսյակի համար համաձայնագրով փոփոխությունը կատարվել էրրորդ եռամսյակի ընթացքում:

Պայմանագրում նշված չի «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննությունների» միջոցառումների իրականացման նպատակով ՀԱԲԼԾԿ-ն նմուշները, որ կազմակերպություններից և ում միջոցով պետք է ստանա: Ներկայացվող որևէ հաշվետվության մեջ չի արտացոլվում նմուշները հանձնող կազմակերպության անվանումը և կազմակերպության քանակական ցուցանիշները:

Կազմակերպության կողմից թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունում առկա փորձաքննության տեսակների քանակական ցուցանիշները համեմատվել են ԳԾԿ-ի կողմից նույն ժամանակաշրջանի համար ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության քանակական ցուցանիշների հետ և պարզվել է, որ ԳԾԿ-ի կողմից բրուցելոզ հիվանդության ախտորոշման համար կատարվել է 478,449 հատ նմուշառում, սակայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից կատարվել է 483,369 հատ բրուցիլոզի ախտորոշման լաբորատոր փորձաքննություն, նմատառիպ կարգով ԳԾԿ-ն կատարել է 3505 հատ լեյկոզի

ախտորոշման համար նմուշառում, սակայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից կատարվել է 63 հատ լեյկոզի ախտորոշման լաբորատոր փորձաքննություն:

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2020-30.06.2020թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ լաբորատոր փորձաքննությունների քանակական ցուցանիշները, այն է. հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանային 469,361 փորձաքննության ցուցանիշը համեմատվել է փաստացի կատարված 488,415 ցուցանիշի հետ և արդյունքում ստացվել է հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 19,054 հատ փորձաքննություն ավելի կատարված: Նշված հանգամանքը ՀԱԲԼԾԿ-ի կողմից բացատրվել է այն հանգամանքով, որ ԳԾԿ-ն տրամադրվել է նախատեսվածից ավելի շատ լաբորատոր փորձաքննության ենթակա նմուշներ: Կատարված վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ԳԾԿ-ն պայմանագրի համաձայն նույն ժամանակահատվածում կարող է կատարել միայն բրուցելոզի մասով 480,360 հատ նմուշառում, հետևաբար նշված ցուցանիշը արդեն ավելի է ՀԱԲԼԾԿ-ի պայմանագրով նախատեսված 469,361 լաբորատոր փորձաքննությունների նախատեսված ցուցանիշից 10,999 հատով: Առկա է անհամապատասխանություն Նախարարության կողմից կնքված վերը նշված պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ կապված, որը առաջացնում է անհամապատասխանություն նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից N1116 Ծրագրի N11003 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառումների շրջանակներում կենդանիների բրուցելոզ հիվանդության ախտորոշումն իրականացվում է «մեկ նմուշ մեկ փորձաքննություն» սկզբունքով, սակայն այն դեպքում, երբ նմուշի փորձաքննության դեպքում ի հայտ է գալիս հիմնավոր կասկած, որ առկա է բրուցելոզ հիվանդություն, նույն նմուշն ուղարկվում է ՊՈԱԿ-ի հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս լաբորատորիա կրկնակի փորձաքննության հիվանդության առկայության (բացակայության) փաստը վերջնականապես հաստատելու (հերքելու) նպատակով: Բացի այդ, ՊՈԱԿ-ը ծրագրի շրջանակներում իրականացնում է լաբորատոր փորձաքննություններ ոչ միայն «Գյուղատնտեսական

ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (բրուցելոզի և լեյկոզի ախտորոշում), այլ նաև ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց պահանջով (այլ հիվանդությունների ախտորոշում) ՀՀ ՍԱՏՄ կողմից տրամադրված լաբորատոր նմուշների նկատմամբ, որոնց մասով ՊՈԱԿ-ը պարբերաբար ներկայացրել է ամփոփ տեղեկանքներ: Վերոնշյալ իրողություններով է պայմանավորված 19054 հատով ավելի կատարված փորձաքննությունների առկայությունը:

Ինչ վերաբերում է լեյկոզ հիվանդության ախտորոշման նկատմամբ կատարված փորձաքննություններին, ապա ՊՈԱԿ-ը պարզաբանել է, որ նշված հիվանդության ախտորոշիչ նյութերը, որոնք տրամադրում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, արդյունավետ օգտագործելու նպատակով լաբորատոր նմուշները փորձաքննվում են դրանց անհրաժեշտ խմբաքանակը լրանալուց հետո օգտագործվող ախտորոշիչին համամասնորեն: 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացված 63 հատ լաբորատոր փորձաքննություններն իրականացվել են 2019 թվականի վերջում ՊՈԱԿ-ին տրամադրված լաբորատոր նմուշների նկատմամբ: Այդ փորձաքննությունները փաստացի ավարտվել են (ծառայությունները փաստացի մատուցվել են) 2020 թվականին:

Միաժամանակ հայտնում են Ձեզ, որ 2020 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ լեյկոզ հիվանդության ախտորոշման նպատակով ՊՈԱԿ-ն իրականացրել է 4713 լաբորատոր փորձաքննություն, որի մասով նույնպես ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացրել ամփոփ տեղեկանք:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը: Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում կիրականացվի հետհսկողական գործընթաց:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի փաստացի արդյունքային ցուցանիշների միջև:

Առկա է անհամապատասխանություն Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի նշված պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ կապված, որը առաջացնում է անհամապատասխանություն նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից ներկայացվող արդյունքային ցուցանիշների համադրմանը և դրանից բխող ֆինանսական պարտավորությունների վերանայմանը:

9. Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 տեսագիտական հոդվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 781,002.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 745,650.03 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 797,764.90 հազ. դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով կատարվել են փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 01.07.2020թ. դրությամբ նախատեսվում է 441 հաստիքային միավոր, որից 82-ը թափուր պաշտոններ են: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն, ընդհանուր առմամբ, չեն զբաղեցվել:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Համեմատելով հաստիքացուցակով հաստատված պաշտոններ զբաղեցնողներին և «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-հունիս ընդլայնված շախմատաձև հաշվետվություններում պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների հետ, պարզվել է, որ չնայած հաստիքացուցակով թափուր պաշտոնների առկայությանը՝ թվով 9 աշխատակիցներ արտահաստիքային պայմանագրերով ընդունվել են աշխատանքի այն դեպքում երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է թափուր հաստիք նույն պաշտոններով՝

- իրավախորհրդատու,
- խորհրդական
- մասնագետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020թ.պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել թափուր հաստիքների համալրման գործընթացին:

10. Նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն որի հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը, ինչը չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի (Այս գլխում այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձանցից ընտրության միջոցով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականի առաջին կիսամյակում Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020թ.պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն որի հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը, ինչը չի իրականացվել:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք ապահովել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը:

11. ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրին մասնակցության մերժում

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշմամբ հաստատված (Այս գլխում այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի՝ 24-րդ կետի մասով, որի համաձայն՝ «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1187 Ծրագրի 12007 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 270,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 63,750.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 63,750.00 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշման Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի՝ Նախարարությունը կոորդինացնում է ծրագրի մանսակցության գործընթացը:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով հայտատուների մերժման պատճառները՝ պարզվել է, որ Նախարարությունը մերժումը հիմնավորում է մասնակցության համար անհրաժեշտ անասնաշենքի կառուցումն իրականացող լիցենզավորված կապալառու կազմակերպության առկայությամբ: Սակայն Որոշմամբ հաստատված Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի 24-րդ կետի համաձայն՝ «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020թ.պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշմամբ հաստատված (Այս գլխում այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի՝ 24-րդ կետի մասով, որի համաձայն «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման

պետական աջակցության» ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք մասնակիցների հայտերի ընդունման և մերժման գործընթացը համապատասխանեցնել «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրին:

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

12. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում թիվ 49-20 պայմանագրի 2.1.2 կետով սահմանված պահանջի մասով՝ Հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված երկրորդ եռամսյակի ձև Հ-4 հաշվետվությունում դեբիտորական պարտք 10,898.04 հազ. դրամ գումարի փոխարեն ներկայացրել է 0 դրամ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1022 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 100,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 82,174.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 71.275.96 հազ. դրամ, դեբիտորական պարտք՝ 10,898.04 հազ. դրամ:

«Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1022 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 100,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 82,174.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 71.275.96 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում Հիմնադրամից ստացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի միջև 20.02.2020թ. կնքված Պայմանագրի 2.1.2 կետի դրույթներով սահմանված երկրորդ եռամսյակի ձև Հ-2, Հ-4 և Հ-8 հաշվետվությունները: Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2020թ.-30.06.2020թ. ժամանակահատվածի համար ձև Հ-2

Հաշվետվությունում Հիմնադրամը պետական բյուջեից ֆինանսավորում է ստացել 82,174.00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 71,275.96 հազ.դրամ, իսկ դրամարկղային մնացորդը կազմել է 10,898.04 հազ.դրամ: Սակայն, համաձայն Էկոնոմիկայի նախարարության բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի կատարման մասին հաշվետվության՝ Հիմնադրամը պետական բյուջեից նշված ժամանակահատվածի համար որպես ֆինանսավորում ստացել է 82,174.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմում է 82,174.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 71,275.96 հազ.դրամ, դեբիտորական պարտք՝ 10,898.04 հազ.դրամ:

Հիմնադրամից ստացված ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի միջև 20.02.2020թ. կնքված Պայմանագրի 2.1.2 կետի դրույթներով սահմանված երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունը տրամադրվել է մեկ թվով, առանց ծախսերի բացվածքի:

հազ. դրամ

Հոդվածի նկարագրություն	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվություն	Էկոնոմիկայի նախարարության բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի կատարման մասին հաշվետվության
Ֆինանսավորում	82,174.00	82,174.00
Դրամարկղային ծախսը	71,275.96	82,174.00
Փաստացի ծախսը	71,275.96	71,275.96
Դեբիտորական պարտք	-	10,898.04

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2020թ առաջին կիսամյակի համար Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը ստացել է 82,174.00 հազ. ՀՀ դրամ ֆինանսավորում, որից դրամարկղային ծախսը /ներառյալ 01.07.2020թ/ կազմել է 71,275.96 հազ ՀՀ դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 65,947.57 հազ ՀՀ դրամ:

Համաձայն 2019թ մարտի 13-ի ՀՀ ֆինանսների նախարարի N 254-Ն հրամանի՝ հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի Հ-2 հաշվետվության մեջ ստացված ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը, ինչպես նաև դրամարկղի մնացորդը նշվում են առանց բացվածքի, մեկ թվով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

2020թ. երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունը ներառում է սույն թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածը և չի կարող ներառել սույն թվականի հուլիսի 1-ին կատարված դրամարկղային ծախսերը, հետևաբար նշվածը ենթակա է ուղղման:

Ի լրումն՝ հաշվեքննության օբյեկտը չի արձագանքել Հ-4 հաշվետվության մեջ դեբիտորական պարտքը զրո ներկայացնելու փաստին:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում թիվ 49-20 պայմանագրի 2.1.2 կետով սահմանված պահանջի մասով՝ Հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված երկրորդ եռամսյակի ձև Հ-4 հաշվետվությունում դեբիտորական պարտք 10,898.04 հազ. դրամ գումարի փոխարեն ներկայացրել է 0 դրամ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք վերանայել Նախարարությանը ներկայացվող Պայմանագրի 2.1.2 կետի դրույթներով սահմանված երկրորդ եռամսյակի ձև Հ-4, հաշվետվությունում ներկայացված դեբիտորական պարտքի գումարը:

13. Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից առաջին կիսամյակում կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում Հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունում, քանի որ այն չի համապատասխանում Հիմնադրամի հաշվապահական համակարգում գրանցված փաստացի և դրամարկղային ծախսերի հետ համապատասխանաբար 14,053.10 և 5,052.76 հազ.դրամ գումարներով:

Հաշվեքննության ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացված, «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական համակարգից արտահանված գործառնությունների մատյանի տեղեկատվության համաձայն՝ պարզվել է, որ փաստացի ծախսը կազմել է՝ 66,223.2 հազ. դրամ:

հազ.դրամ

Փաստացի ծախսի բնույթը	Գումար ըստ ՀԾ-հաշվապահ համակարգի	Գումար ըստ հիմնադրամի Հ-2 հաշվետվության	Տարբերություն
--------------------------	--	---	---------------

Ծառայություններ	27,390.80		
Աշխատավարձ	26,752.90		
Չփոխհատուցվող հարկեր	11,068.80		
Վառելիք	628.30		
Տույժեր	221.90		
Բանկային ծախսեր	72.10		
Առհաշիվ գումարներ	16.10		
Այլ գնումներ	72.30		
	66,223.20	71,275.96	5,052.76

Արդյունքում առկա է ֆինանսական հաշվետվության խեղաթյուրում 5,052.76 հազ.դրամ գումարով:

Հաշվեքննության ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացված, «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական համակարգից արտահանված գործառնությունների մատյանի տեղեկատվության համաձայն, որը համադրվել է հիմնադրամի բանկային հաշիվների քախվածքի հետ՝ պարզվել է, որ դրամարկղային ծախսը կազմել է՝ 68,120.86 հազ. դրամ:

Փաստացի ծախսի բնույթը	Գումար ըստ ՀԾ-հաշվապահ համակարգի	Գումար ըստ հիմնադրամի Հ-2 հաշվետվության	հազ.դրամ Տարբերություն
Ծառայություններ	25,831.05		
Աշխատավարձ	16,938.10		
Չփոխհատուցվող հարկեր	24,060.60		
Վառելիք	754.00		
Այլ	537.20		
	68,120.90	82,174.00	14,053.10

Արդյունքում առկա է ֆինանսական հաշվետվության խեղաթյուրում 14,053.10 հազ.դրամ գումարով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Երկրորդ եռամսյակի համար հիմնադրամի կողմից ներկայացված Հ-2 հաշվետվության մեջ առկա է տեխնիկական վրիպակ, որն ընդունվել է ի գիտություն և տարեկան ճշտված հաշվետվությունը կներկայացվի նախարարությանը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը: Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում կիրականացվի հետհսկողական գործընթաց:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում Հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունում, քանի որ այն չի համապատասխանում Հիմնադրամի հաշվապահական համակարգում գրանցված փաստացի և դրամարկղային ծախսերի հետ համապատասխանաբար 14,053.10 և 5,052.76 հազ.դրամ գումարներով:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք վերանայել Նախարարությանը ներկայացվող Պայմանագրի 2.1.2 կետի դրույթներով սահմանված երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունը և արտացոլել հաշվապահական համակարգում և սկզբնական հաշվառման փաստաթղթերում ներկայացված փաստացի և դրամարկղային ծախսերը:

14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ԳԾԿ-ի արդյունքային ցուցանիշներում ներկայացված պատվաստված կենդանիների փաստացի քանակում՝ առնվազն 323,250 կենդանու համար:

Թիվ 1116 Ծրագրի թիվ 11001 միջոցառման շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը առաջին կիսամյակի ընթացքում 4266 հոդվածով՝ «Առողջապահական և լաբորատոր նյութերի» գնման համար ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 327,156.20 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 81,857.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 160,721.42 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է առաջին կիսամյակի ընթացքում կատարված առողջապահական և լաբորատոր նյութերի գնումները, որի համար փաստացի վճարումը կատարվել է.

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարար ման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/
1	Ռոզ-բենգալ բրուցելոզի ախտորոշման նյութ /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	14.02.2020թ	17,090	3,418.00

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարարման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/
2	Լեյկոզի ախտորոշիչ հավաքածու /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	18.03.2020թ	7000	700.00
3	Անանսնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյութ /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	18.03.2020թ	1,476,500	11,073.80
4	ՄԵԿ ծաղիկի և ԽԵԿ հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութ /մլ/	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ	18.03.2020թ	3,618,850	45,235.60
5	Կենդանիների հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված չոր պատվաստանյութ /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	17.04.2020թ	683,250	9,080.39
6	Կաուստիկ սոդա /կգ/	«Յունիքիմ» ՍՊԸ	21.04.2020թ	1000	270.00
	Ֆորմալին /կգ/		21.04.2020թ	1000	336.00

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարարման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/
7	ԽԵԿ և ոչխարների խշխշան պալար հիվանդության նկատմամբ հիդրոքսիդայումի նային, ֆորմալինային պատվաստանյութ /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	27.04.2020թ	1,153,200	9,560.00
8	Թռչունների կեղծ ժանդախտ H շտամի կենդանի չոր պատվաստանյութ /մլ/	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	08.05.2020թ	1,455,600	2,183.40
	Ընդամենը				81,857.19

Այսպիսով, 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում առողջապահական և լաբորատոր նյութերի գնման գործընթացին հիմնականում մասնակցել և հաղթող են ճանաչվել միևնույն կազմակերպությունները, տվյալ պարագայում հայտարարված թվով 8 առողջապահական և լաբորատոր նյութերի 5 մրցույթներում հաղթող է ճանաչվել «Ագաստ» ՍՊԸ-ն, ընդ որում բոլոր դեպքերում տվյալ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկներում ապրանքի ինքնարժեքը հավասար է շահույթի գումարին, այսինքն տվյալ կազմակերպության շահույթը գնային առաջարկում կազմել է 100%:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության կողմից ձեռքբերված և ելքագրված առողջապահական և լաբորատոր նյութերի շարժը և պարզվել է, որ 01.04.2020 թվականի դրությամբ պահեստում առկա են ժամկետանց պատվաստանյութեր, օրինակ՝ պահեստում առկա 621,800մլ, 870.47 հազ. դրամ ընդհանուր գումարով թռչունների կեղծ ժանդախտ «H» շտամի կենդանի չոր պատվաստանյութ, որի պիտանելիության ժամկետը ավարտվել է 2020 թվականի հունվար ամսին և այն օգտագործման համար այլևս պիտանի չի եղել: Պիտանելիության ժամկետում չէր նաև 1600 մլ, գումարով 11.82 հազ. դրամ արժողությամբ, անանսնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյութը: Պետք է նշել, որ ժամկետանց պատվաստանյութերի առկայությունը պայմանավորված է

պատվաստանյութերի գնման չափաբաժինների ոչ ճիշտ պլանավորման և օգտագործման ժամկետների հետ:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ԳԾԿ/ կողմից ներկայացված պահեստավորված առողջապահական և լաբորատոր նյութերի մասին հաշվետվության հիման վրա առկա պատվաստանյութերի քանակը չէր բավականացնում արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2020-30.06.2020թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանի համար պատվաստված կենդանիների պատվաստման համար: Ստորև ներկայացված է համապատասխան աղյուսակը՝

Նկարագիր	Սկզբնական մնացորդ առ 01.04.2020 (մլ)	1-ին կիսամյակում ծախս	1-ին կիսամյակում կատարված գնում	Պակասորդ
Ա	Բ	Գ	Դ	Ե=Բ+Դ-Գ
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	460,900			
ՀՀ թվով 38 տարածաշրջաններում համաճարակաբանների և անասնաբուժ մասնագետների մոտ	56,800	1,164,200	-	(646,500)
Ընդամենը	517,700	1,164,200		(646,500)
Պատվաստված կենդանիների քանակ համաձայն արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2020- 30.06.2020թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության		613,820 ⁵		323,250 ⁶

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում

5 Խոշոր եղջերավոր 1 կենդանու համար նախատեսված 1 չափաբաժին պատվաստանյութիը կազմում է 2 մլ: Փոքր եղջերավոր 1 կենդանու համար նապատեսված է 0,5 չափաբաժին:

6 Հանդիսանում է պակաս պատվաստված կենդանիների առնվազն քանակ՝ հաշվի առնելով, որ կատարվել է 1 ամբողջական չափաբաժնով պատվաստում:

2020թ. պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում ԳԾԿ-ի արդյունքային ցուցանիշներում ներկայացված պատվաստված կենդանիների փաստացի քանակում՝ առնվազն 323,250 կենդանու համար:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք վերանայել Նախարարությանը ներկայացվող արդյունքային ցուցանիշները:

15. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակցի պարգևատրման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում 2007թ. հունվարի 9-ի թիվ 5 «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեյային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրամանի հավելված 16-ի հետ:

«Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 տեսագիտական հոդվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 781,002.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 745,650.03 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 797,764.90 հազ. դրամ:

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և

հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հոդվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝ տարանջատելով պարգևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

Հոդվածի կոդ	Հոդվածի անվանում	Հիմնական աշխատավարձ	Պարգևատրում	Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	537,145.60	111,634.30	21%
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	87,834.60	0%
4113	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	-	61,150.40	0%
	Ընդամենը	537,145.60	260,619.30	49%

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի տրված պարզաբանումը ըստ էության չէ և արձանագրված խեղաթյուրմանը չի տալիս լիարժեք պատասխան:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում 2007թ. հունվարի 9-ի թիվ 5 «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրամանի հավելված 16-ի հետ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» չներառել պարզևատրման ծախսերը:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

16. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում իրականացվող մոնիթորինգ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1022 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 100,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 82,174.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 71.275.96 հազ. դրամ:

Հիմք ընդունելով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշումը, «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» ծրագիրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Այս գլխում այսուհետ՝ Նախարարություն) 2020 և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (Այս գլխում այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2020 թվականի փետրվարի 25-ին կնքվել է թիվ 49-20 պայմանագիրը (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով նախատեսվում է, որ Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված մոնիթորինգը չի իրականացվել: Այսպիսով արձանագրվել է հսկողության գործընթացի թերացում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում

2020թ. պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում կապված Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի գործընթացում:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք հետամուտ լինել պայմանագրով սահմանված իրավասությունների կատարմանը:

17. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար կազմակերպված գնումների գործընթացում առկա հսկողության գործընթացի թերացումների վերաբերյալ

Ստորև ներկայացված են հաշվեքննության ընթացքում հայտնաբերված գնումների գործընթացի հետ կապված հսկողության տարրերի թերացումները՝

- N ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով, թղթային եղանակով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում կնքվել է պայմանագիր, էլեկտրոնային ձևով կազմակերպվող գնման ընթացակարգի օրինակելի ձևով, որի արդյունքում հանձնման-ընդունման արձանագրությունը պետք է կցվի նաև գնումների էլեկտրոնային armeps.am համակարգում: Սակայն Հիմնադրամի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը չի ներբեռնվել գնումների էլեկտրոնային armeps.am համակարգ:
- N ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրում նկարագրված չէ ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման ժամկետները: Սակայն պայմանագրի 5.3, 5.4 կետերով հղում է տրվում պայմանագրով չսահմանված ժամկետին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

- ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգը իրականացվել է թղթային եղանակով, որի արդյունքում պատշաճ կարգով կազմակերպվել է փաստաթղթաշրջանառությունը, մասնակիցը ողջամիտ ժամկետներում ներկայացրել է հանձնման-ընդունման արձանագրությունը և ակտը, որոնք

հաստատվել են հիմնադրամի կողմից և վճարումն իրականացվել է ըստ Պայմանագրով նախատեսված Վճարման ժամանակացույցի /Հավելված 2/:

- • Հարկ է նշել, որ ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով Պայմանագրի կատարման ժամկետը կազմել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 20 օր համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի /Հավելված 1/: Ըստ Պայմանագրի մատակարարման խախտման թույլատրելի ժամկետ է սահմանվել 10 օրը: Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը: Այսպիսով հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման ժամկետները սահմանված են Պայմանագրի Վճարման ժամանակացույցով /Հավելված 2/ և ապրանքի մատակարարման ժամկետներով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

N ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով, թղթային եղանակով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում կնքվել է պայմանագիր էլեկտրոնային, այլ ոչ թե թղթային եղանակով կազմակերպվող գնման ընթացակարգի օրինակելի ձևով:

N ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-20/5 ծածկագրով կնքված պայմանագրում բացակայում է 5.2 կետը, որը սահմանում է ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման ժամկետները, սակայն նշված պայմանագրի 5.3 և 5.4 կետերով հղում է տրված պայմանագրով չսահմանված կետերին:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում կապված Հիմնադրամի կողմից իրականացվող գնումների գործընթացում:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք հետամուտ լինել գնումների գործընթացում հսկողության թերությունների վերացմանը:

18. Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանն ուղղված արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանն ուղղված 2020թ. առաջին կիսամյակում նախատեսված միջոցառումներն իրականացվել են մասամբ: Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ տարբերությունը պայմանավորված է ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված իրավիճակով, որի պատճառով հետաձգվել կամ չեղյալ են հայտարարվել բոլոր ցուցահանդեսներն ու միջոցառումները:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ չեն իրականացվել հետևյալ միջոցառումները՝

- Հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը միջազգային ցուցահանդեսները, համոտեսները և գինու մրցույթները,
- Խաղողագործական շրջանների, խաղողի մշակության համար ներուժ ունեցող հողատարածքների ուսումնասիրությունը,

իրականացված միջոցառումները երեքն են: Մասնավորապես՝

Արդյունքի չափորոշիչներ	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Տարբերություն	Իրականացված միջոցառումները
Միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում և տպագիր մամուլում հայկական գինեգործության վերաբերյալ հոդվածներ, հատ	5	5	-	1.Ditestaedigola.com /https://bit.ly/3i653Lk հունվարի 15, 2020 2.Decanter https://bit.ly/2te2kvY հունվար 19, 2020 3.Radio Krakow https://bit.ly/384hvam փետրվար 1, 2020 4.https://www.terredeins.com/ մարտ , 2020 նկարները կից 5.TheDailyBeast.com https://bit.ly/30POGgM Հունիս 13, 2020
Հայկական խաղողի սորտերի	20	20	-	Հիմնադրամի կողմից ներկայացվել է մասամբ

գենետիկական և ամպելոգրաֆիական անձնագրավորում, գինեգործական ներուժի ուսումնասիրություն, սորտ/հատ				
Մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ և խորհրդատվություններ, հատ	25	25	-	Հիմնադրամի կողմից ներկայացվել է մասամբ

Հաշվի առնելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված իրավիճակը, որի պատճառով հետաձգվել կամ չեղյալ են հայտարարվել բոլոր ցուցահանդեսներն ու միջոցառումները՝ միջոցառումների վրա կատարվող դրամարկղային ծախսը կազմել է 82,174.00 հազ. դրամ, ընդ որում հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմում է՝ 100,000.00 հազ. դրամ, իսկ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերությունը՝ 17,826.00 հազ.դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Առաջին կիսամյակի արդյունքային ցուցանիշների թերակատարումը պայմանավորված է COVID – 19 համավարակով պայմանավորված իրավիճակով, ինչի պատճառով հետաձգվել կամ չեղյալ են համարվել մի շարք առանցքային ծրագրեր և միջոցառումներ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ հիմնադրամը նախաձեռնել է արդյունքային ցուցանիշների փոփոխություն, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2020թ հուլիսի 2-ի N 1094 – Ն որոշմամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հարցը կուսումնասիրվի Նախարարության բյուջեի կատարման ինն ամսիների հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում կապված Հիմնադրամի համար պլանավորված արդյունքային ցուցանիշների նկատմամբ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք հետամուտ լինել պլանավորված արդյունքային ցուցանիշների կատարման նկատմամբ:

19. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ

Կրկնվող կետ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակներում Հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված հանձնման-ընդունման արձանագրության համաձայն, մարտի 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում (6 աշխատանքային օր) ծառայությունների դիմաց կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,890.0 հազ. դրամ: Համաձայն 2020 թվականի ապրիլի 7-ի վճարման հանձնարարագրի՝ մարտ ամսվա համար Հիմնադրամը Կատարողին վճարել է նույն գումարի չափով «Այգեբաց, էտ, արքատների հեռացում, մոլախոտերի դեմ պայքար» անվանումով կատարված աշխատանքների համար, որի գինը Հիմնադրամի կողմից հաշվեքննողներին ներկայացված ըստ ամիսների կատարված գնահաշվարկի հետ հնարավոր չէ համադրել, քանի որ աշխատանքների բացվածքը վճարման հանձնարարագրում և գնահաշվարկում միանման չէ: Ավելին, մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար:

Հաշվեքննության ընթացքում նաև պարզվել է, որ հանձնման-ընդունման արձանագրությունում վճարման ենթակա գումարը ներկայացված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Մոլախոտերի դեմ պայքարն, առհասարակ, կրում է շարունակական բնույթ, իսկ այս տարվա առատ տեղումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել դրանք հեռացնել ոչ միայն մարտ ամսին, այլև յուրաքանչյուր ամիս: Բացի այդ, հավելյալ աշխատանքներ կատարելու համար Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել: Ի լրումն վերոնշյալի, հայտնում ենք, որ գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են ոչ միայն աշխատանքային, այլև հանգստյան օրերին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից նշված՝ բազմաթիվ մասնագետների հավանությանը արժանացած գնահաշվարկում, մոլախոտերի դեմ պայքարի ծառայությունները նախատեսվել էր իրականացնել մայիս ամսին, իսկ մարտ ամսին իրականացնելու համար դրա անհրաժեշտությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթուղթ հաշվեքննողներին չի տրամադրվել:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված աշխատանքների բացվածքի, վճարման հանձնարարագրի և գնահաշվարկի անհամադրելիության հետ: Նշվածի հետևանքով մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար:

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված նախահաշվային գինը հիմնավորող գնագոյացման մեխանիզմների հետ:

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված Նախարարության կողմից պայմանագրով որպես իրավասություն վերապահված մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններում կամ վճարման հանձնարարագրերում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով, այլ՝ ըստ աշխատանքների և ծառայությունների տեսակների, որը պետք է համընկնի գնահաշվարկի հետ:

Նախարարությանն իրականացնել մոնիթորինգ նշված ծրագրի նկատմամբ՝ ապահովելով առավել արդյունավետ հսկողության գործընթացների կատարումը ծրագրի գնումների գործընթացների նկատմամբ:

20. ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-L որոշման (այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կադարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական

բյուջեի թիվ 1187 Ծրագրի 12007 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 270,000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 63,750.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 63,750.00 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ N 369-Լ որոշման (Այս գլխում այսուհետ՝ Որոշում) Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի՝ մոնիթորինգը իրականացվում է Նախարարության կողմից:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության՝ ծրագրի մոնիթորինգն իրականացնող Գյուղատնտեսության խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչությունը չունի այն իրականացնելու համար հստակ սահմանված ընթացակարգ: Հետևաբար ողջ ընթացակարգն իրականացվում է չկանոնակարգված ձևաչափով: Համաձայն Որոշմամբ հաստատված Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի 28-րդ կետի՝ «Մոնիթորինգն իրականացվում է տնտեսություններ այցելությունների և փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա, յուրաքանչյուր փոխհատուցումից առաջ՝ նախանշված աշխատանքներն իրականացված լինելու վերաբերյալ շահառուի դիմումի հիման վրա»: Ընդ որում ծրագրով առանձանցվում է երկու փուլ: Առաջին փուլի մոնիթորինգային աշխատանքները մեկնարկում են շինարարության ավարտական ակտի հիման վրա, իսկ երկրորդ փուլի համար անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման վերաբերյալ ձեռք բերված և տեղադրված սարքերի մասին համապատասխան փաստաթղթերով: Սարքերը պետք է ձեռք բերված լինեն ծրագրին մասնակցելու պայմանագիր կնքելու օրվանից հետո: Այս բոլոր փաստաթղթերը պետք է կցվեն դիմումին: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից երկրորդ փուլի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի ամբողջականությունը և համադրումը փաստացի կատարված ծախսերի հետ չի կատարվում: Ի լրումն՝ հատկապես երկրորդ փուլի փաստաթղթերի ամբողջականությունը հնարավոր չէ ստուգել, քանի որ անհասկանալի է, թե արդյոք դրանք պետք է հիմնավորեն մասնակցի կողմից կատարված բոլոր ծախսերը, թե միայն այն ծախսերը, որոնք փոխհատուցվում են Նախարարության կողմից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ինչ վերաբերում է էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ հաշվեքննության արձանագրության 5.1-րդ կետին, ապա «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մոնիթորինգի իրականացման կարգը ներկայումս գտնվում է մշակման փուլում: Միաժամանակ, առ այսօր մոնիթորինգների իրականացման չկանոնակարգված լինելու վերաբերյալ դիտարկումն ընդունելի չէ, քանի որ մոնիթորինգի արդյունքում դիմումատուի տնտեսություն այցելության միջոցով ըստ ծրագրի ուսումնասիրվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն իրականությանը և կատարվում է տարածքի տեղագնություն: Առաջին և երկրորդ փուլերի մոնիթորինգներն իրականացվում են ըստ ծրագրի՝ անկապ բոքսային պահվածքով անասնաշենքի չափորոշիչների և անկապ բոքսային պահվածքով անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար անհրաժեշտ սարքերի համապատասխանության ստուգմամբ՝ Ծրագրի 20-րդ կետով սահմանված աղյուսակների հիման վրա:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Մոնիթորինգի իրականացման մշակվող կարգ կուսումնասիրվի Նախարարության բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննության ընթացքում:

Առանց մշակված կարգի մոնիթորինգի իրականացման կանոնակարգվածության վերաբերյալ արձագանքը չի համապատասխանում Նախարարության բյուջեի կատարման վեց ամիսների հաշվեքննության արդյունքներին և լրացուցիչ կուսումնասիրվի ինն ամիսների հաշվեքննության շրջանակում:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում կապված Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի գործընթացում:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Առաջարկում ենք սահմանել մոնիթորինգի կարգ, ապահովելու Ծրագրում ներկայացված նպատակների իրականացումը:

21. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ

«Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին կիսամյակի կադարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1224 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,956,430.60 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2,086,351.07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,086,351.07 հազ. դրամ:

1224 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր» ծրագրի 11001 «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» միջոցառման համար առաջին կիսամյակում փաստացի ծախսվել է 2,086,351.07 հազ. դրամ, որից 714,703.4 հազ. դրամը միայն հյուրանոցային ծառայությունների համար, 833,987.5 հազ. դրամը միայն սննդի մատակարարման համար, իսկ 537,660.1 հազ. դրամը հյուրանոցային՝ ներառյալ սնունդ ծառայության համար:

Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում ծրագրի հաշվեքննության իրականացման և հաշվեքննություն արդյունքների ամբողջական ամփոփման նպատակով 24.09.2020թ. N ՀՊԵ-405 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջվել է հավելյալ տեղեկատվություն բուժում ստացողների, մեկուսացվածների, բուժհաստատությունների անձնակազմերի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը ստանալուց հետո ծրագրի հաշվեքննության արդյունքները կներկայացվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության 9 ամիսների հաշվեքննության ընթացքում:

Վ. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

N	Անհամապատասխանություն / խեղաթյուրում/ հսկողության գործընթացի	Վերացված է / վերացված չէ / ընթացքում է ⁷	Հիմնավորումներ ⁸	6 ամիսների հաշվեքննության արդյունք
1.	Հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությամբ սահմանվել է «...մասնավորապես 2020 թվականի մարտ ամսվա առաջին կեսին 10-15 օրյա ժամկետում կատարողը պետք է իրականացնի տնկարկների ամբողջ տարածքում առկա երկաթբետոնե հենասյուների (մոտ 3000 միավոր) վերատնկման, նորոգման, լրացման եւ լարերի ձգման աշխատանքներ, նաեւ իրականացնի 2,36 հա մակերեսով տնկարկում առկա հենասյուների հանում, փոսերի խորացում (ծեռքով՝ մինչեւ 50-60 սմ, սյուների վերատնկում եւ ամրապնդում...»։ Սակայն պայմանագիրը կնքվել է մարտ ամսվա երկրորդ կեսին՝ մարտի 23-ին։ Համաձայն մարտ ամսվա աշխատանքների կատարման հանձնման ընդունման արձանագրության՝ փոսերի խորացման աշխատանքները	Վերացված չէ	«Նորիկ Շմավոնյան» ԱԶ-ի հետ 23.03.2020թ. կնքված N ՀԽԳՀ – ԳՀԱՇՁԲ – 20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանված է եղել փոսերի խորացում /ծեռքով/, որի ընթացքում հողի կարծր շերտի ի հայտ գալու հետևանքով դժվարություններ է առաջացրել ապահովել 50-60սմ։ Անհրաժեշտություն է առաջացել փոսերի խորացման աշխատանքները կատարել հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով, ինչը նախօրոք համաձայնեցվել է հիմնադրամի հետ։ Հարկ է նշել, որ հորատ կցորդիչի միջոցով փոսերի խորացումը կատարվել է կրկնակի անգամ, հողաշերտի համատարած կարծր լինելու պատճառով, և ըստ այդմ՝ Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել։ (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Տես կրկնվող կետ 3

⁷ Ընտրել երեք տարբերակներից մեկը/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁸ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

	կատարվել են ոչ թե ձեռքով, այլ տեխնիկայով՝ հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով:			
2.	Հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված հանձնման ընդունման արձանագրության համաձայն, մարտի 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում (6 աշխատանքային օր) ծառայությունների դիմաց կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,890,0 հազ. դրամ՝ համաձայն հանձնման-ընդունման արձանագրության: Մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար (տես ընթացիկ եզրակացության 2-րդ կետ):		Մոլախոտերի դեմ պայքարն, առհասարակ, կրում է շարունակական բնույթ, իսկ այս տարվա առատ տեղումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել դրանք հեռացնել ոչ միայն մարտ ամսին, այլև յուրաքանչյուր ամիս: Բացի այդ, հավելյալ աշխատանքներ կատարելու համար Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել: Ի լրումն վերոնշյալի, հայտնում ենք, որ գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են ոչ միայն աշխատանքային, այլև հանգստյան օրերին: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Տես կրկնվող կետ 19
3.	Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ 67104-0220 պայմանագիրը «Pect7ApT) UMC-ի հետ Prowein Dusseldorf գինիների եւ ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար 16,386.0 հազ. դրամ գումարով: Առկա է անհամապատասխանություն կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ, 17-րդ կետերի եւ 2-րդ կետի 1-ին ենթակետի	Ընթացքում է	2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

	հետ (տես ընթացիկ եզրակացության 2-րդ կետ):			
4.	Հիմնադրամը ProWein Dusseldorf գինիների եւ ակոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատումն իրականացնելու նպատակով վճարել է 31,300 եվրոյին համարժեք 16,386.0 հազ. դրամ, որը հանդիսանում է պայմանագրի ընդհանուր գումարի դիմաց 100 տոկոս կանխավճար: «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (ե) պարբերության եւ 32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման եւ դրա առավելագույն չափը: Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան, Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման՝ առանց կանխավճարի ապահովման, որը նաեւ հակասում է Կարգի 32 րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջին, այն է՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը (տես ընթացիկ եզրակացության 4-րդ կետ):	Վերացված չէ	Prowein ցուցահանդեսի տաղավարի կառուցապատման համար կնքված պայմանագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 2 փուլով, յուրաքանչյուրը 15,650 եվրո գումարի չափով: Վճարվել է 50 տոկոս կանխավճար տաղավարի նախագծման, ինչպես նաև կառուցապատման անհրաժեշտ նյութերը ձեռքբերելու նպատակով, իսկ տաղավարի կառուցապատումն ավարտելուց հետո վճարվել է պայմանագրի գնի մնացած մասը, որից հետո պաշտոնական գրությամբ հիմնադրամը տեղեկացվել է 2020թ. ցուցահանդեսի չեղարկման և այն 2021թ. մարտի 21-23-ը տեղափոխման մասին: Չեղարկումից հետո կառուցապատողն ապամոնտաժել է տաղավարը և պահեստավորել հաջորդ տարվա ցուցահանդեսի համար: Հիմնադրամը չի կարող պահանջել գումարի վերադարձ, քանի որ կառուցապատողն իրականացրել է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հարկ ենք համարում նշել, որ ըստ ցուցահանդեսի կանոնակարգի՝ տաղավարների կառուցապատման համար սահմանվում է կոնկրետ ժամկետ, մասնավորապես, COVID-19 համավարակով պայմանավորված, 2020թ. ցուցահանդեսի համար նախատեսված է եղել բոլոր տաղավարների կառուցապատումն իրականացնել մինչև	Տես կրկնվող կետ 5

			2020թ. մարտի առաջին տասնօրյակը: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
5.	Հաշվեքննության շրջանակում Հիմնադրամի կողմից տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որով ներկայացված տեղեկատվությունը հակասում հաշվեքննության ընթացքում ձեռքբերված փաստերին: Հայտարարությունում արձանագրված է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հայտ են ներկայացրել հինգ մասնակիցներ: Ուստի պետք է կիրառվեր անգործության ժամկետ:	Ընթացքում է	2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:
6.	ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաստիքացուցակը: Ըստ հրամանի նախատեսվում է 446 հաստիքային միավոր, որից 75-ը թափուր պաշտոններ են: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն ընդհանուր առմամբ չեն զբաղեցվել: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա	Ընթացքում է	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում հայտարարվում է մրցույթ: Միաժամանակ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն մրցույթի թեստավորումն անցկանում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում: Քանի որ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը նոր է գործարկվում և առ այսօր որևէ մրցույթ չի	Հաշվեքննության օբյեկտի կողմից նշված անհամապատասխանության վերաբերյալ ներկայացվել է, որ այն համապատասխանեցնելը գործող օրենսդրությանը ընթացքում է , սակայն 01.07.2020թ. դրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 441 հաստիքից առկա է 82 թափուր պաշտոն / 18.5 %/, այնինչ առաջին եռամսյակում 446 հաստիքից թափուր են եղել 75 /16.8%/: Ինչպես երևում է թափուր հաստիքների քանակը ավելացել է 1.7% -ով Լրացուցիչ տես նաև կրկնվող կետ 9

	ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել (տես ընթացիկ եզրակացության 6-րդ կետը)		անցկացվել տեղեկատվական հարթակով, մրցույթների հայտարարումը որոշակի ժամանակահատվածով չի իրականացվել: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 30-ի N 02/43.2/48568-2020 գրությամբ՝ համապատասխան մարմիններին տեղեկացվել է, որ այսուհետ մրցույթներ իրականացվելու են պացառապես տեղեկատվական հարթակում: Սեպտեմբեր ամսից մինչ օրս հայտարարվել և անցկացվել է 2 ներքին մրցույթ, 1 մրցույթ հայտարարվել է տեղեկատվական հարթակում, ևս 3-ը ընթացքի մեջ են: Թափուր պաշտոնների համալրումը շարունակվում է: (Անձնակազմի կառավարման վարչություն)	
7.	Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականի առաջին եռամսյակում Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ (տես ընթացիկ եզրակացության 7-րդ կետը):	Վերացված է	ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 6-ի N 1827-Լ որոշման համաձայն դադարեցվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի բաժնի գործունեությունը: Որոշումը ուժի մեջ մտնելուց՝ 2020 թվականի մարտի 1-ից հետո սահմանված կարգով կատարվել է համապատասխան փոփոխություն նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում, այնուհետև մարտի 10-ից բաժնի քաղաքացիական ծառայողները ազատվել են զբաղեցրած պաշտոններից: (Անձնակազմի կառավարման վարչություն)	Հաշվեքննության օբյեկտի կողմից նշված անհամապատասխանության վերաբերյալ ներկայացվել է որ ան վերացված է, սակայն 01.07.2020թ. դրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում չի գործում ներքին աուդիտի համակարգը Լրացուցիչ տես կրկնվող կետ 10

8.	Հիմնադրամի գործադիր տնօրենի եւ քաղաքացու միջեւ 2017 թվականի հունիսի 1-ին կնքված ԱՊ թիվ 17 պայմանագրի 6-րդ կետով սահմանվել է 130,0 հազ. դրամի չափով ամսական աշխատավարձ: Սակայն համաձայն «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրի ընդլայնված շախմատաձեւ հաշվետվության՝ տվյալ անձի հաստիքի գումարը կազմել է 250.0 հազ. դրամ: Արդյունքում, 2020 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Հիմնադրամի աշխատակցին ավելի է հաշվարկվել 360.0 հազ. դրամ (տես ընթացիկ եզրակացության 8-րդ կետ)	Վերացված է	2017թ հունիսի 1-ին կնքված ԱՊ/17 աշխատանքային պայմանագրի 6.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն 2019թ փետրվարի 2-ին կնքված համաձայնագրով՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի թիվ 14 արձանագրության, որով հաշվապահի աշխատավարձը սահմանվել է 250,000 ՀՀ դրամ: Համաձայնագրի պատճենը տրամադրվել է հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներին: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Խնդիրը լուծված է:
9.	Հիմնադրամի գործադիր տնօրենի եւ քաղաքացու միջեւ 2010 թվականի հունվարի 20-ին կնքված ԱՊ N25 պայմանագրի 6-րդ կետով ամսական աշխատավարձ է սահմանվել 20.0 հազ. դրամ: Համաձայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի, քաղաքացու 2020 թվականի հունվար ամսվա աշխատած օրերի թիվը կազմել է 8 օր: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկվել է 9 աշխատանքային օրվա համար՝ ավելի հաշվարկելով 5625 դրամ (տես ընթացիկ եզրակացության 9-րդ կետ)	Վերացված է	2020թ հունվարի 20-ին կնքված ԱՊ/25 պայմանագրի 6.1 կետի համապատասխան հավաքարարի հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկելիս հաշվի չի առնվել ՀՀ Կառավարության հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխելու մասին N 42-Ն որոշումը, որի արդյունքում աշխատավարձը հաշվարկվել է 9 օրվա համար: Համաձայն աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի՝ աշխատակցի հուլիս ամսվա աշխատավարձից կատարվել է պահում ավել վճարված 5,625 ՀՀ դրամի չափով: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Խնդիրը լուծված է:
10.	411100 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի վերաբերյալ՝ ըստ ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ	Վերացված է	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ Ծրագիր 1058, միջոցառում 11001 գծով 4111 «Աշխատողների	Նշված անհամապատասխանությունը վերացված է 1-ին կիսամյակի արդյունքներով:

	ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեով նշված հոդվածով 352,333.0 հազ. դրամ գումար: Նախարարության կողմից, հաշվեքննություն իրականացնելու նպատակով, տրամադրված երեք ամիսների ՀԾ հաշվապահ ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-մարտ ընդլայնված շախմատածն հաշվետվության համաձայն նշված հոդվածով փաստացի ծախսը կազմել է 304,487,.04 հազ. դրամ գումար:		աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության և անալիտիկ հաշվառման տվյալների միջև 47945 հազ.դրամի տարբերությունը առաջացել է մեխանիկական սխալի/վրիպակի հետևանքով: Նույն հոդվածի վերաբերյալ կազմված և ներկայացված 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությամբ վրիպակն արդեն իսկ ուղղված է: (Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն)	
11.	2020 թվականի փետրվարի 10-ին Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագիր, որի շրջանակում ՀԱԲԼԾԿ-ին վճարվել է 40.670,3 հազ. դրամ և վերջինս այդ գումարի չափով ներկայացրել է կատարողականի հաշվետվություն: Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից հաշվեքննության շրջանակում ներկայացված թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին եռամսյակում փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի՝ առաջին եռամսյակում կատարվել է 92.659 լաբորատոր փորձաքննություն, որի ընդհանուր գումարը կազմել է 29.853.8 հազ. դրամ: Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված	վերացված է	«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի հաշվետվության անճիշտ ներկայացումը պայմանավորված է արդյունքային ցուցանիշները ֆինանսավորված ծավալին համապատասխանեցնելու հանգամանքով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության համաձայն, նախատեսված 469 361 հատ 145735,3 հազ. դրամ արժողությամբ փորձաքննությունների դիմաց փաստացի կատարվել են 488415 հատ 157362,4 հազ. դրամի փորձարկումներ: Այսպիսով, առաջին եռամսյակի անճշտությունը վերացվել է:	Ընդունված է

	հաշվետվության թիվ 11003 միջոցառման շրջանակներում նշված փաստացի կատարված լաբորատոր հետազոտությունների համար նախատեսված ֆինանսական հաշվետվություններում փաստացի ծախսը 40.670.3 հազ. դրամի փոխարեն պետք է լիներ 29.853.6 հազ դրամ, ինչը հանդիսանում է ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրում (տես ընթացիկ եզրակացության 11-րդ կետ):		(Սննդամթերքի անվտանգության վարչություն)	
12.	Հաշվեքննությամբ պարզվել է, որ թիվ 1116 ծրագրի 11003 միջոցառման՝ ՀԱԲԼԾԿ-ի կողմից առաջին եռամսյակում իրականացված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի համաձայն, 92.659 հատ լաբորատոր փորձաքննություններից 91.539 հատը հանդիսանում են բրուցելոզի փորձաքննություններ: Բրուցելոզի փորձաքննությունների իրականացման համար, ՀԱԲԼԾԿ-ն ստանում է նմուշներ «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որը կատարում է համապատասխան նմուշառումներ: Համաձայն «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի վերաբերյալ ներկայացված՝ Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության, աշխատանքները չեն իրականացվել և «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀԱԲԼԾԿ-ին չի ներկայացրել նմուշ բրուցելոզի	Վերացված է	«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը փորձարկումների իրականացման համար բոլոր լաբորատոր նմուշներն ստանում է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակցի (տեսուչի) ուղեկցող նամակով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում լաբորատոր փորձաքննության (թվով 92659 հատ, որից բրուցելոզի ախտորոշում՝ 91539 հատ) ենթարկված բոլոր լաբորատոր նմուշների տեսչական ուղեկցող նամակներն առկա են և անհրաժեշտության դեպքում ՊՈԱԿ-ը պատրաստակամ է տրամադրելու դրանց լուսապատճենները: Հաշվեքննության օբյեկտի կողմից որևէ	Ընդունված է, սակայն ճիշտ կլիներ եթե հաշվեքննությանը տրամադրվի նաև ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակցի (տեսուչի) ուղեկցող նամակները նույնպես:

փորձաքննության համար: ՀԱԲԼԾԿ-ի և Նախարարության միջև կնքված Պայմանագրի 2.3.1 կետի պահանջների համաձայն՝ Նախարարությունը ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Սակայն հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մոնիթորինգ չի իրականացվել և չեն իրականացվել համապատասխան հսկողության գործընթացներ վերոնշյալ անհամապատասխանությունները կանխարգելելու կամ բացահայտելու և ուղղելու համար: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.1-րդ կետի պահանջների հետ (տես ընթացիկ եզրակացության 12-րդ կետ):	առարկություն չի ներկայացվել այն մասին, որ Նախարարությունը չպետք է իրականացնի պայմանագրով իրեն վերապահված մոնիթորինգի աշխատանքները: (Սննդամթերքի անվտանգության վարչություն) «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի հաշվետվության անճիշտ ներկայացումը պայմանավորված է արդյունքային ցուցանիշները ֆինանսավորված ծավալին համապատասխանեցնելու հանգամանքով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության համաձայն նախատեսված 469361 հատ 145735,3 հազ.դրամ արժողությամբ փորձաքննության դիմաց փաստացի կատարվել է 488415 հատ 157362,4 հազ.դրամի փորձարկում: Այսպիսով առաջին եռամսյակի անճշտությունը վերացվել է: Ուստի 2020 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով ՊՈԱԿ-ը ավելի գումար չի ստացել: (Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն)	
--	---	--

13.	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ԳՖԿ-ի և ՖԿ-ի միջև կնքված պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ ԳՖԿ-ն (պայմանագրում ներկայացված է որպես ֆինանսավորող) իրավասու է իրականացնել վարկերի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումներ: Սակայն ԳՖԿ-ի կողմից չի իրականացվել որևէ տեսակի ստուգում և պայմանագրով նախատեսված իրավասությունը փաստացի չի իրացվել, ինչը հսկողության գործընթացների թերացում է:	Ընթացքում է	ՀՀ Կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշման մոնիթորինգի իրականացման գործառույթը փոխանցվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը և վարկերի տրամադրման մոնիթորինգը ամբողջությամբ վերապահված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը: Այսինքն ԳՖԿ-ն ոչ թե թերացել է գործառույթը իրականացնելիս այլ ՀՀ Կառավարության որոշմամբ չի ունեցել պատվիրակված համապատասխան լիազորություն, իսկ սուբսիդավորման պայմանագրում նշված կետը պահպանվել է, ֆինանսական կառույցներից տեղեկատվություն ստանալու նպատակով: Ներկայումս նախարարության կողմից իրականացվում է պայմանագրերի փոփոխության և լրամշակման գործընթաց, որով նշված խնդիրները կկարգավորվեն: (Գյուղատնտեսական ֆինանսավորման Կառույց)	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:
14.	Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգ բացակայում են հստակ դրույթներ հավաստագրի տրամադրման մերժման վերաբերյալ: Եթե տնտեսվարողին մերժվում է Հավաստագրի տրամադրումը, ապա այն իրականացվում է բանավոր կարգով՝ չիմնավորելով այն որևէ հաստատված ձևաչափով և ընթացակարգով, ինչը հաշվեքննողների գնահատմամբ	Ընթացքում է	«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգը խմբագրման ընթացքում է: Նախատեսվում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը շրջանառել և հաստատել Նախարարի հրամանով: (Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչություն)	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

	դիսկային է դարձնում հսկողության գործընթացը:			
15.	Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգի իրականացվում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից՝ վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության համապատասխան վարչության կողմից մոնիթորինգ իրականացնելու համար որևէ հաստատված ընթացակարգ չկա: Հետևաբար ողջ ընթացքն իրականացվում է չկանոնակարգված ձևաչափով:	Ընթացքում է	«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգի իրականացման համար մշակվել է ««Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակում վարկառուների կողմից վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգ», որը շրջանառվել է Նախարարության ստորաբաժանումներում: Այժմ գտնվում է ստացված կարծիքների ամփոփման փուլում: Նախատեսվում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը հաստատել Նախարարի հրամանով: Հրամանով նախատեսվում է նաև մոնիթորինգի իրականացումը վերապահել գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչությանը: (Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչություն)	Խնդիրը լուծված է:
16.	Սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Ֆինանսական կառույցների, ԳՖԿ-ի և Նախարարության միջև:	Ընթացքում է	ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

			ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ նախատեսվում է այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և Ֆինանսական կառույցների միջև: (Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչություն)	
17.	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ընթացիկ եզրակացության 16-րդ կետում ներկայացված վարկառու տնտեսվարողների գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ համաձայն ՀՀ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգի կամ վերջիններս հաշվառումից հանված են ըստ նշված համակարգի 2020 թվականի հուլիսի 24-ի դրությամբ:	Վերացված չէ	Ցանկում նշված վարկառուները, որոնց գործունեությունը համաձայն ՊԵԿ էլեկտրոնային համակարգի ժամանակավորապես դադարեցված է, դեռևս հիմք չի հանդիսանում, որ առկա է ռիսկ վարկերի նպատակային օգտագործման հետ կապված: Քանի որ համաձայն ՀՀ Կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վարկերի վարկունակությունը գնահատվում է ֆինանսական հաստատությունների կողմից և ծրագրով ամրագրված չէ, որ եթե իրավաբանական անձը ժամանակավորապես դադարեցնում է	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

			գործունեությունը ուստի դա հանգեցնում է վարկի նպատակային օգտագործման ռիսկերի և կարող է դադարեցվել սուբսիդավորումը: Ավելին ներկայացված ցանկի ուսումնասիրությունից հետո պարզ դարձավ, որ ցանկում առկա բոլոր վարկառուների վարկերը նպատակային են օգտագործվել՝ համաձայն ֆինանսական կառույցների մոնիթորինգների եզրակացության: (Գյուղատնտեսական Ֆինանսավորման Կառույց)	
18	Ստեղծել սուբսիդավորվել տնտեսվարող սուբյեկտների /վարկառու/ միասնական ռեգիստր՝ հաշվի առնելով հանրության կողմից Ծրագրից օգտվելու մեծ պահանջարկը:	Վերացված չէ	Սուբսիդավորվող տնտեսվարող սուբյեկտների /վարկառուների/ միասնական ռեգիստրի ստեղծումը դեռևս հնարավոր չէ իրականացնել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով: Միասնական ռեգիստր ստեղծելու հարցը կքննարկվի համապատասխան ռեսուրսների առկայության պայմաններում: (Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչություն)	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:
19	Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրություններում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով. այլ ըստ աշխատանքների եւ ծառայությունների տեսակների:	Ընդունելի չէ	Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2020թ. «Գնման գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետի՝ «Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու	Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում: ՀՀ ֆինանսների նախարարի կողմից Հանձնման- ընդունման արձանագրության ձևի հետ համամիտ ենք, որտեղ <<վճարման ենթակա գումարը>> բաժնում նշվում է փաստացի կատարված աշխատանքի գումարը, որը ձեր կողմից նշվել է մեկ թվով

			ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ հուլիսի 18-ի N 356 հրամանի հավելվածի 8-րդ կետի՝ «Վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը», որն ըստ ժամանակացույցի հաստատված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի գների: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	վճարման ժամանակացույցի գումարը, սակայն ինչպես նշել էինք վերևում՝ մարտ ամսվա կատարողականով սահմանված 1,505.0 հազ. դրամ գինը Ձեր կողմից ներկայացված գնահաշվարկի հետ չեր համապատասխանում, դրա համար ել անհրաժեշտություն էր առաջացել գինը ներկայացնել ըստ կատարված աշխատանքների գների բացվածքի:
--	--	--	--	--

VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվում է՝

1. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից 2020 թվականի փետրվարի 25-ին կնքված թիվ 49-20 Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:
2. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից կազմակերպվող գնումների գործընթացին:
3. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի համապատասխանեցմանը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթներին:
4. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից միջազգային ցուցահանդեսներին մասնակցության համար աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելուն:
5. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից կողմից աշխատակիցների վճարման գործընթացի համապատասխանեցմանը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթներին:
6. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից ներկայացվող արդյունքային ցուցանիշների համադրմանը և դրանից բխող ֆինանսական պարտավորությունների վերանայմանը:
7. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել թափուր հաստիքների համալրման գործընթացին:
8. Առաջարկում ենք ապահովել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը:

9. Առաջարկում ենք մասնակիցների հայտերի ընդունման և մերժման գործընթացը համապատասխանեցնել «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրին:
10. Առաջարկում ենք վերանայել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացվող երկրորդ եռամսյակի ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված դեբիտորական պարտքի գումարը:
11. Առաջարկում ենք վերանայել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացվող երկրորդ եռամսյակի ձև Հ-2 հաշվետվությունը և արտացոլել հաշվապահական համակարգում և սկզբնական հաշվառման փաստաթղթերում ներկայացված փաստացի և դրամարկղային ծախսերը:
12. Առաջարկում ենք վերանայել Նախարարությանը ներկայացվող արդյունքային ցուցանիշները:
13. Առաջարկում ենք 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» չներառել պարզևատրման ծախսերը:
14. Առաջարկում ենք սահմանել մոնիթորինգի կարգ, ապահովելու «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման կամ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրում ներկայացված նպատակների իրականացումը: